ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

SCIENTIFIC AND CULTURAL CONCEPTIONS OF METAMORPHOSIS IN THE CONTEXT OF ARMENIAN ORAL TRADITION

НАУЧНЫЕ И КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЕ ПРЕДСТАВЛЕНИЯ О МЕТАМОРФОЗЕ В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ УСТНОЙ ТРАДИЦИИ

Լիլիթ Սահակյան
Lilit Sahakyan
Лилит Саакян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

lilit.sahakyan@iae.am

Ներկայացվել է՝ 22.09.2025; գրախոսվել է՝ 04.03.2026; ընդունվել է՝ 14.04.2026
Received: 22.09.2025; Revised: 04.03.2026; Accepted: 14.04.2026
Представлено: 22.09.2025; рецензировано: 04.03.2026; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 202. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-253

Ամփոփում – Կերպարանափոխությունը բազմաշերտ մշակութաբանական ու գիտական երևույթ է, որ հայ բանավոր ավանդության մեջ արտահայտվում է առասպելներում, ավանդազրույցներում և հրաշապատում հեքիաթներում՝ որպես բարոյախրատական, ծիսական և խորհրդանշական գործիք: Այս աշխատանքում փորձ է արվում ներկայացնել կերպարանափոխության դրսևորումները հայ բանավոր ավանդության համատեքստում՝ համադրելով հնդեվրոպական դիցաբանական պատկերացումների հետ: Վերլուծվում են կերպարանափոխության ժամանակային, մշակութային և հոգևոր տարբեր շերտեր՝ ընդգծելով դրա դերը անցումային ծեսերում և հասարակական նորմերի վերականգնման գործընթացում: Իրականացված հետազոտությունը բացահայտում է, որ կերպարանափոխությունը հայ ավանդության մեջ ընձեռում է վերափոխման և ինքնության վերաիմաստավորման հնարավորություն՝ միաժամանակ հանդիսանալով մշակութային հիշողության պահպանման և սերունդների միջև կապի ամրապնդման միջոց: Հոդվածում առանձնացվում են նաև կերպարանափոխության դրսևորման հիմնական տեսակները, ինչպես նաև դրանց գործառութային տարբերությունները զանազան ժանրերում: Նշվում է, որ հեքիաթներում կերպարանափոխությունը հաճախ կապված է փորձությունների հաղթահարման և հերոսի հասունացման հետ, մինչդեռ առասպելներում այն կարող է

հանդես գալ որպես աստվածային պատիժ կամ պարգև: Ուսումնասիրությունը կարևորում է նաև կերպարանափոխության կապը տոտեմական պատկերացումների, միջնաշխարհի գաղափարի և մարդու՝ գերբնականի հետ հարաբերությունների հետ: Ուսումնասիրության շրջանակում անդրադարձ է կատարվում նաև կերպարանափոխության գիտական մեկնաբանություններին՝ հոգեբանության, կենսաբանության և մշակութաբանության տեսանկյուններից՝ ցույց տալով դրա համընդհանուր բնույթը: Առանձնացվում են կերպարանափոխության դրսևորման ձևերը՝ ժամանակավոր և մշտական, ինչպես նաև դրանց գործառույթները տարբեր ժանրերում: Այսպիսով, կերպարանափոխությունը դիտարկվում է ոչ միայն որպես գեղարվեստական հնարք, այլև՝ աշխարհընկալման հիմնարար ձև:

Abstract – Metamorphosis is a multilayered cultural and scientific phenomenon that is expressed in Armenian myths, legends, and wonder tales as a didactic, ritual, and symbolic tool. This study attempts to present the manifestations of metamorphosis in the context of Armenian oral tradition, comparing them with Indo-European mythological perspectives. The analysis examines the temporal, cultural, and spiritual dimensions of metamorphosis, emphasizing its role in transitional rites and in the restoration of social norms. The conducted study reveals that metamorphosis in Armenian tradition offers an opportunity for transformation and rethinking of identity, while simultaneously serving as a means of preserving cultural memory and strengthening intergenerational connections. The article also identifies the main types of metamorphosis and their functional differences across various genres. It is noted that in fairy tales metamorphosis is most often associated with the overcoming of trials and the maturation of the hero, whereas in myths it may function as a form of divine punishment or reward. The study further emphasizes the connection of metamorphosis with totemistic beliefs, the concept of the liminal (intermediate) world, and the relationship between humans and the supernatural. Within this framework, scientific interpretations of metamorphosis are also examined from the perspectives of psychology, biology, and cultural studies, revealing its universal character. The forms of metamorphosis – temporary and permanent – are distinguished, along with their functions in different genre contexts. Thus, metamorphosis is considered not only as an artistic device but also as a fundamental mode of perceiving and understanding the world.

Аннотация – Превращение (метаморфоза) является многослойным культурным и научным феноменом, который в армянской устной традиции проявляется в мифах, легендах и волшебных сказках как нравоучительный, ритуальный и символический инструмент. В данной работе предпринята попытка рассмотрения метаморфоз в контексте армянской устной традиции и сопоставления их с индоевропейскими мифологическими представлениями. Анализируются временные, культурные и духовные аспекты превращения, подчеркивается его роль в переходных обрядах и процессе восстановления общественных норм. Проведенное исследование показывает, что в армянской традиции метаморфоза дает возможность трансформации и переосмысления идентичности, одновременно выступая средством сохранения культурной памяти и укрепления связи между поколениями. В статье также выделяются основные типы проявления метаморфозы – временные и постоянные, а также их функциональные различия в тех или иных жанрах. При этом в сказках метаморфоза чаще всего связана с преодолением испытаний и процессом взросления героя, тогда как в мифах она может выступать как форма божественного

наказания или вознаграждения. Исследование подчеркивает также связь метаморфозы с тотемистическими представлениями, идеей промежуточного мира и взаимоотношениями человека с сверхъестественным. В рамках работы рассматриваются и научные интерпретации метаморфозы с позиций психологии, биологии и культурологии, что позволяет выявить ее универсальный характер. Выделяются формы проявления метаморфозы – временные и постоянные, а также их функции в различных жанровых контекстах. Таким образом, метаморфоза рассматривается не только как художественный прием, но и как фундаментальная форма мировосприятия.

Հիմնաբառեր – կերպարանափոխություն, դիցաբանություն, հեքիաթ, ծես, ինքնություն:
Keywords – metamorphosis, mythology, fairy tale, ritual, identity.
Ключевые слова – метаморфоза, мифология, сказка, обряд, идентичность.

Ներածություն

Աշխարհի շատ ժողովուրդների բանավոր ավանդության մեջ արտացոլված են նախնադարյան համայնական հասարակարգի մարդ-ներկայացուցչի աշխարհայացքը, նրա անսահման երևակայությունը, մտորումներն ու պատկերացումները բնության մասին: Մարդկանց միշտ հետաքրքրել է, թե որտեղ են սահմանները (Ван Геннеп 1999, 198) մարդու և ոչ մարդու միջև, որոնք են բաժանարար գծերը մարդկանց, կենդանիների, բույսերի կամ աստվածային էակների միջև: Երբեմն այդ սահմանները խիստ պահպանվել են, և դրանց խախտումը դիտարկվել է որպես օրինազանցություն, սակայն ժամանակի ընթացքում մարդիկ ձգտել են անցնել դրանք՝ հասկանալու, թե ինչ կա սահմաններից այն կողմ: Տարբեր մշակույթներում այդ սահմանների հաղթահարումը ներկայացվել է կերպափոխության կամ կերպարանափոխության միջոցով՝ իբրև ոչ միայն ֆիզիկական, այլև սոցիալական և մշակութային սահմանների խախտման, փոփոխության գաղափարի արտացոլում: Նշյալ երևույթը կապված է տոտեմական նախնիների պաշտամունքի հետ, համաձայն որի՝ հավատացյալները պատկերացրել են, որ իրենց նախնիները կարող են վերածվել կենդանիների, ծառերի, իրերի, ոգիների կամ այլ բնական տարրերի՝ շարունակելով պահպանել կապը հետագա սերունդների հետ: Մահացածների վերածվելը ուրվականների և այլնի որոշակի իմաստով նշանակում է նրանց նույնականացում նախնիների անանձնական արքետիպի հետ (Eliade 1959, 47):

Կերպարանափոխությունը բազմաշերտ երևույթ է և տարբեր մշակույթներում ստացել է տարբեր մեկնաբանություններ: Նախնադարյան հասարակություններում այն ընկալվել է որպես տոտեմական անցում, միջնադարում՝ աստվածային միջամտություն կամ կախարդանք, իսկ ավելի ուշ՝ գրականության և արվեստի մեջ՝ որպես մարդկային հոգեվիճակի փոփոխության խորհրդանիշ:

Հայ բանավոր ավանդության մեջ այս երևույթն առկա է առասպելներում, ավանդազրույցներում, հեքիաթներում, որտեղ կերպարանափոխությունն օգտագործվել է բարոյախրատական, խորհրդանշական, ծիսական և այլ նպատակներով:

Հայ ժողովրդական ավանդազրույցներում կերպարանափոխությունը հաճախ ներկայացվել է որպես աստվածային պատիժ կամ պարգև. մարդիկ գործած մեղքերի կամ բարեգործության հետևանքով կարող էին վերածվել կենդանիների, քարերի, բույսերի կամ ջրի աղբյուրների: Հեքիաթներում այս երևույթն առավել հաճախ ժամանակավոր բնույթ է կրում. հերոսը կախարդանքի կամ անեծքի հետևանքով կարող է վերածվել կենդանու կամ առարկայի, սակայն որոշակի պայմանների կատարման դեպքում վերադառնում է իր նախնական տեսքին: Այս մոտիվն առավելապես հանդիպում է հրաշապատում հեքիաթներում, որտեղ կերպարանափոխությունը ոչ միայն սյուժետային տարր է, այլև փորձությունների հաղթահարման խորհրդանիշ:

Կերպարանափոխության գիտական և մշակութային դիտանկյունները

Կերպարանափոխության բնորոշումը կամ մեկնաբանությունները տարբերվում են՝ կախված ուսումնասիրվող խնդրի բնույթից, գիտական ոլորտի տեսանկյունից և մշակութային համատեքստից:

Հոգեբանության մեջ այս երևույթը հիմնականում ընկալվում է որպես «փոխակերպում», որը կապվում է անձի ներաշխարհի, հոգեկան աշխարհի, արժեքների և վարքագծի փոփոխության հետ: Այն հաճախ դիտարկվում է անձի պաշտպանության մեխանիզմների, դրանցում տեղի ունեցող փոփոխությունների, ինչպես նաև երկվությունների ուսումնասիրության համատեքստում: Շվեյցարացի հոգեվերլուծաբան Յունգը չափազանց կարևորում է կերպարանափոխությունը՝ այն համարելով անհատականության զարգացման դռները բացող բանալի, ծիսական կամ հոգևոր վերափոխման գործընթացի կարևոր գործիք, ինչպես նաև անուղղակի վերածննդի մի տեսակ, սակայն ոչ թե ուղղակիորեն՝ մահվան և վերածննդի միջով անցնելով, այլ անուղղակիորեն՝ ընկալվելով որպես տեղի ունեցող անհատից դուրս փոփոխության գործընթաց մեկ արքետիպային վիճակից մյուսին, որը ենթադրում է խոր հոգեբանական զարգացում և ինտեգրացում (Jung 1959, 205):

Բուսական աշխարհն ուսումնասիրող գիտությունների մեջ կերպարանքի փոփոխությունը վերաբերում է բույսերի կառուցվածքային փոփոխություններին, օրինակ՝ տերևների կամ ցողունների զարգացմանը զուգընթաց տեղի ունեցող ձևափոխումներին: Այն կարող է լինել նաև գենետիկ և ֆիզիոլոգիական գործընթացների արդյունք, որն արտահայտվում է բույսի կենսաձևերի տարբեր փուլերում: Կենդանաբանական գիտություններում մետամորֆոզը լայնորեն ուսումնասիրված է որպես կենսաբանական գործընթաց, որը բնորոշ է որոշ կենդանիների՝ մասնավորապես միջատներին: Սա վկայում է ոչ միայն մարմնի կառուցվածքի փոփոխության, այլև կենսակերպի և միջավայրի հետ փոխազդեցության վերակազմակերպման մասին:

Հայկական ճարտարապետության մեջ կերպարանափոխության դրսևորումներ կարելի է տեսնել բազմաթիվ կենդանակերպ և թռչնակերպ որմնանկարներում, բարձրաքանդակներում, որոնք հաճախ համադրված են մարդկա-

յին դեմքերի հետ: Այս խորհրդանշական պատկերները հաճախ կրում են մշակութային և կրոնական խորհուրդ: Կենդանիների մասին առասպելաբանական հնագույն պատկերացումների հիշատակները դրոշմված են Հայկական լեռնաշխարհի, մասնավորապես Սյունիքի, Գեղամա լեռների, Արագածի լանջերի, Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերված ժայռապատկերներում, ինչպես նաև մ.թ.ա. III-I հազարամյակներով թվագրվող հնագիտական տարբեր իրերի ու առարկաների զարդանախշերում կամ պարզապես կենդանակերպ ու թռչնակերպ արձանիկներում ու քանդակներում (Հարությունյան 2017, 279): Նորավանքի Աստվածածին եկեղեցու որմնանկարներում ներկայացված են թևավոր առյուծներ, սֆինքսներ և այլ կերպարներ, որոնք խորհրդանշում են տարբեր առասպելական և կրոնական գաղափարներ: Այս դեպքում ձևափոխությունը ցուցադրում է բնության, կենդանիների, աստվածների և մարդկանց ձևերի համադրությունը՝ խառնելով մարդկային ու բնական տարրերը՝ իբրև կրոնական և մշակութային մտածելակերպի դրսևորում: Նույնիսկ այնպիսի խորհրդանշաններ, ինչպիսիք են թռչունները կամ առյուծները, ցույց են տալիս աստվածային ուժերի և բնության տարրերի փոխակերպումներին միտված գաղափարները: Ըստ միջնադարյան պատկերացումների՝ Քրիստոսի-արծվի-արեգակի նույնականացման սկզբունքը արևելաքրիստոնեական արվեստում Հիսուսին կերպարանավորում է հավերժ երիտասարդությունը նորոգող և երկնքի տիրակալի՝ արծվի սիմվոլով (Առաքելյան 1949, 128–129), որը խորհրդանշում է հոգու փրկության գաղափարը: Համաձայն որոշ կարծիքների՝ արծիվը նաև կերպարանափոխված հրեշտակն է, որը «Ահեղ դատաստանի» ժամին պետք է հափշտակի և երկնային արքայություն տանի հանգուցյալի մարմինը, իսկ Սուրբ հոգին բարձրաքանդակներում ներկայացվում է աղավնակերպ (Մաթևոսյան 2017, 74–76):

Կրոնական համատեքստում կերպարանափոխությունը հաճախ կապված է հոգևոր վերափոխման հետ: Տարբեր մշակույթներում և կրոնական ավանդույթներում կերպարանափոխության գաղափարը հանդես է գալիս տարբեր ձևերով՝ երբեմն որպես աստվածային հայտնության դրսևորում, երբեմն որպես անհատի ներքին՝ հոգևոր վերափոխման գործընթաց: Այս երևույթի բազմազան մեկնաբանությունները պայմանավորված են տվյալ հասարակության մշակութային, լեզվաբանական և կրոնական առանձնահատկություններով: Կերպարանափոխությունն իր բարձրագույն դրսևորումն է ստանում Հիսուսի կերպարով, որը համադրելի է մարդու հոգևոր վերաիմաստավորման և փրկության հնարավորության հետ (Elliade 1954, 46): Այլ կրոնական համակարգերում ևս կերպափոխության գաղափարը կապված է հոգևոր վերափոխման, մահից հետո հոգու համբարձման կամ կյանքի ընթացքում հոգևոր մաքրագործման հետ: Էլիադեն շեշտում է, որ տարբեր կրոնական համակարգերում մահը և հոգու հետագա գոյությունը մեկնաբանվում են որպես անհատականից արքետիպային վերափոխման գործընթաց, որը նախադրյալ է հոգևոր կերպարանափոխության գաղափարի համար:

Մարդկության պատմության, հասարակական հարաբերությունների, ինչպես նաև մշակութային ու քաղաքական զարգացումների մեջ կերպարանափոխությունը կարող է դիտարկվել փոփոխության տարբեր գործընթացներում՝ մշակութային, քաղաքական, հեղափոխական թե էվոլյուցիոն, որտեղ արտացոլվում են հասարակության և անհատի զարգացումը, ինչպես նաև պատմական անցումների կարևորագույն փուլերը, որտեղ հասարակությունը և անհատը կարող են վերափոխվել՝ անցնելով նոր արժեքների, գաղափարների կամ սոցիալական կարգերի: Մշակութային փոփոխությունները կարող են ներառել ավանդույթների, համոզմունքների փոխակերպումներ, իսկ քաղաքական, հեղափոխական ձևափոխությունները հաճախ կապված են իշխանության փոփոխության, նոր քաղաքական կարգերի առաջացման հետ:

Դիցաբանության և առասպելաբանության մեջ կերպարանափոխությունը դրսևորվում է տարբեր սյուժեներում՝ խորհրդանշելով առանձին գաղափարներ կամ նպաստելով որոշակի «առաքելությունների» իրականացմանը: Կերպարանափոխության խորհրդանշական տարրեր և փոխաբերություններ պարունակող բազմաթիվ առասպելներ արտացոլված են գրականության, արվեստի և մշակութային տարբեր ճյուղերում: Գրականության, արվեստի և փիլիսոփայության մեջ կերպարանափոխության գաղափարը լայնորեն կիրառվում է բարդ գաղափարները այլաբանորեն պատկերելու, ներկայացնելու և խորհրդանշական կերպով փոխանցելու համար (Ջրբաշյան, Մախչանյան 1972, 19): Այն հաճախ օգտագործվում է նաև միստիկ և խորհրդավոր թեմաների շրջանակներում՝ ստեղծելով գաղափարական խորը բովանդակություն: Գրական-գեղարվեստական պատկերը կարող է դրանով կառուցվել, շատ նման է անձնավորմանը, միայն թե պարունակում է հստակ նպատակ՝ բնության և կենդանիների «մարդկայնացման» միջոցով ակնարկել մարդկային կյանքի մասին (Ջրբաշյան 1980, 243):

Կերպարանափոխություն նշանակում է կերպարանքի կամ արտաքին տեսքի փոփոխություն, երբ որևէ բան վերածվում է մեկ այլ բանի (Սահակյան 2025, 96–106): Այն ոչ միայն ֆիզիկական ձևի փոփոխություն է, այլ նաև նպատակային փոխակերպում՝ որոշակի ժամանակում և իրավիճակում: Կերպափոխվելը ներառում է ձևի, դիրքի կամ բնույթի փոփոխություն, որը առասպելներում, ավանդազրույցներում, հեքիաթներում հաճախ հանդես է գալիս որպես խորհրդանշական մեխանիզմ՝ որոշակի լուծումներ գտնելու կամ գաղափարներ փոխանցելու համար: Այն բանավոր ավանդության մեջ դրսևորվում է այլաբանորեն, անուղղակի ձևերով՝ պայմանավորված կերպարանքի փոփոխության տարբեր պատճառներով, գործառույթներով, նպատակներով: Եզրույթը ծագում է հունարեն “metamorphosis” բառից և նշանակում է էակի կամ առարկայի անցում մեկ ձևից մյուսին՝ արտաքին տեսքի և գործառույթների փոփոխությամբ: Կերպարանափոխության բնույթի ու գործառույթների վերաբերյալ միասնական մոտեցում չի ձևավորվել. տեսակետները տարբեր են: Մելետինսկու կարծիքով, մետամորֆոզները խորհրդանշում են վաղ առասպելապոետիկ մտածողությանը բնորոշ առանձնահատկությունները՝ այն պատկերացումները, որտեղ

մարդիկ, կենդանիները, անշունչ առարկաներ և աստվածներ համընկնում էին մեկ ընդհանուր համակարգում, և նրանք կարող էին միմյանց փոխարինել մետամորֆոզների միջոցով (Мелетинский 1995, 225): Ռոզենտալը մետամորֆոզը համարում է շարժուն երևույթ, քանի որ այն ներկայացնում է կերպարանափոխության ընթացքը (Розенталь 2013, 329): Արությունովան էլ շեշտում է, որ մետամորֆոզը ներկայացնում է փոխակերպված աշխարհը՝ որպես դրվագ, տեսարան, որը ներառում է սյուժեի ամբողջական զարգացում (Арутюнова 1990, 296–298): Ըստ Ա. Ջիվանյանի՝ կերպարանափոխությունը որոշ դեպքերում հանդես է գալիս որպես ժանրային որոշիչ ոճական հնարք (Ջիվանյան 2008, 74): Սարգիս Հարությունյանը բանավոր ավանդության մեջ, մասնավորապես առասպելներում տարբերակում է առասպելաբանաստեղծական մտահայեցությունների երկու հիմնական արտահայտչաեղանակ՝ կերպարանափոխում և անկենդան բնության անձնավորում (Հարությունյան 2017, 195): Անձնավորված անկենդան առարկան մարդու կամ կենդանու հատկանիշով ու կերպարով արդեն իսկ կերպարանափոխում է՝ այն տարբերությամբ միայն, որ կերպարանափոխումն ունի սյուժետային պատճառաբանում և սյուժետակերտման պարտադիր սկզբունք (Հարությունյան 2017, 195–196), և բնական, աստվածային, բարոյաընտանեկան, սոցիալ-բարոյական կարգի յուրաքանչյուր խախտող, իբրև պատիժ, ենթարկվում է կերպարանափոխման (Հարությունյան 2017, 208):

Կերպարանափոխության դրսևորումները դիցաբանական պատկերացումներում, ավանդապատումներում և ժողովրդական հեքիաթներում

Հայկական դիցաբանական ու բանահյուսական պատկերացումներում կերպափոխումը կերպարի կախարդական փոփոխությունն է, որը հիմնականում կրում է ժամանակավոր, սահմանափակ բնույթ և պայմանավորված է հետագայում նախկին տեսքին վերադառնալու հնարավորությամբ: Այս մոտիվը հիմնված է տոտեմական հավատալիքների վրա, համաձայն որոնց՝ մարդու հոգին կարող է մարմնավորվել կենդանու, բույսի, առարկայի կամ երևույթի մեջ՝ ամբողջապես կամ մասնակի: Կերպափոխությունը լայն առումով դիտարկվում է որպես բնականոն ընթացքին հակառակ գործողություն: Դրա համար անհրաժեշտ է շրջվել, թեքվել կամ գնալ հակառակ ուղղությամբ՝ խորհրդանշելով աշխարհակարգի խախտում, անցումային վիճակ: Հատկապես հայտնի է դարձվորյակության գաղափարը, որի համաձայն, մարդը կարող է ժամանակավորապես վերածվել կենդանու՝ պահպանելով որոշ մարդկային հատկություններ կամ վերադառնալով նախկին կերպարին: Հայկական ավանդական պատկերացումներում որպես պատիժ կարգազանցության կամ մեղավոր վարքի համար՝ մարդը, առավել հաճախ կինը, Աստծո կողմից կարող է կերպափոխվել գայլի: Այս ձևափոխությունը միաժամանակ ընկալվում է որպես խրատ և աստվածային պատիժ, բայց նաև՝ մարդու գերբնական ուժերի դրսևորում: Գայլ դարձած մարդը, ըստ հավատալիքների, ձեռք է բերում ակնառու ունակություններ՝ ֆիզիկական ուժ, ճարպկություն, գիշերային տեսողություն, երկար կյանք, ինչպես

նաև ունակություն՝ անցնելու ցանկացած դռնով, ինչը ևս խորհրդանշական նշանակություն ունի: Կերպարանափոխությունը հաճախ տեղի է ունենում երկու աշխարհների՝ իրականի և անիրականի, մարդու և գերբնականի սահմանագծում: Այս սահմանային տարածքը՝ «միջնաշխարհը», հանդես է գալիս որպես ծեսային անցումային միջավայր: Այդտեղ անցումային ծեսի շնորհիվ մարդը ձեռք է բերում այլ կերպարանք՝ արտահայտելով նոր կարգավիճակ: Բանահյուսության և դիցաբանական սյուժեներում, որոնք արտացոլում են անցումային ծեսերը, կերպարանափոխության մոտիվը ենթադրում է կարգավիճակի փոփոխություն, որն ուղեկցվում է տարածական և ժամանակային սահմանների հատմամբ: Անցումային կերպափոխության ամենահայտնի օրինակը հայոց դիցաբանական պատկերացումներում մարդագայլի կերպարն է (Հարությունյան 2017, 281): Վերջինս գտնվում է միջանկյալ դիրքում երկու աշխարհների միջև (ՀԺՀ 1962, 442, ՀԺՀ 1977, 363, ՀԺՀ 1985, 107):

Հայկական ավանդությունների մեջ մեծ տեղ են գրավում բնաշխարհի մասին պատմող ավանդությունները (Ղանալանյան 1959, 757): Հիշենք լեռների, քարաժայռերի, աղբյուրների, այլ հուշարձանների մասին ավանդապատումները, համաձայն որոնց՝ մարդիկ, կենդանիները Աստծո հրամանով վերածվում են քարաժայռերի, սարերի, աղբյուրների, հուշարձանների, առասպելական իրողությամբ՝ քարացումով (Համաստեղ 1989, 133–136):

Տարբեր բնիկ ժողովուրդների առասպելներում ընդունված հնարանք է՝ կենդանիները կամ բնության մասնիկները, երևույթները ստանում են մարդկային կերպարանք կամ հակառակը՝ ցույց տալով մարդու և բնության սերտ կապը, փոխհարաբերությունները տարբեր հանգամանքներում: Մարդիկ, կենդանիները, մշակութային բարիքները աստվածային կամքով վերածվում են քարերի, ժայռերի, բլուրների (Հարությունյան 2017, 281): Նրանք կարող են Աստծո հրամանով լեզու առնել, խոսել, շարժվել: Հայտնի են բարոյական նորմերի խախտման հետևանքով առաջացած կերպափոխումներ՝ ժլատության, ագահության, դաժանության, չենթարկվելու պատճառով, ինչպես արջը՝ այգեպան, ջաղացպան, կրիան՝ գող, կապիկը՝ ներկարար, գորտը, կաքավը՝ հարս և այլն:

Հայկական ավանդապատումներում կենդանիներից կերպափոխվում են 8-ը՝ արջ, կրիա, կապիկ, կատու, գորտ, մողես, օձ, ձուկ, թռչուններից՝ 13-ը՝ բու, տատրակ, կաքավ, հոպոպ, կկու, թիթեռ, սիակ, բեբուկ, գագո, ծիծեռնակ, հավալասան, կռունկ, արագիլ: Ընդ որում՝ 21-ից 16-ը սկզբում մարդ են եղել, մեկընդմիշտ վերածվել թռչնի կամ կենդանու, իսկ արագիլը և կռունկը մարդուց վերածվում են թռչնի, և հակառակը, այսինքն՝ ունեն ժամանակավոր բնույթ:

Հեքիաթը բանավոր ավանդության նախնական կերպն է՝ վաղնջատիպը, որը ներառում է մարդկության վաղ մտածողության գիտակցական ու ենթագիտակցական շերտերը (Հայրապետյան 2016, 12): Հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում կերպարանափոխությունը լայնորեն տարածված հնարանք է: Այն դրսևորվում է ոչ թե գերբնական՝ աստվածային ուժով և ունի ժամանակավոր բնույթ, այլ որևէ կախարդի, գուշակի ցանկությամբ, հրամանով, կամքով,

երբեմն որևէ իրի օգնությամբ կատարվող փոփոխություն է՝ պայմանավորված որոշակի նպատակներով, պատճառաբանությամբ, և կապ չունի առասպելաբանական իրողությունների հետ: Դա ժողովրդական՝ հրաշապատում հեքիաթի կարևոր բաղկացուցիչ տարր է՝ որոշակի հիմնավորվածությամբ (Հարությունյան 2017, 285): Կենդանակերպ հարսնացուի կամ փեսայի մասին սյուժեներում (ATU 301, 552 և այլ թվահամարի հեքիաթների տարբերակներ) հերոսը կամ հերոսուհին դառնում են գորտ, կրիա, օձ, հորթ, էշ, ձիու քուռակ և այլն, որոնք նվիրագործման փուլ են անցնում լիարժեք ամուսնությունից առաջ: Շապիկը, մորթին կամ կաշին՝ իբրև կենդանակերպության նշան, համարվում են այն աշխարհում գտնվելու փաստեր: Ամուսնացողը խախտում է կենդանակերպ հերոսի վրա դրված անեծք-արգելքը, այրում է կողակցի շապիկը կամ մորթին: Այրվելը հավասարազոր է նրան, որ հերոսը կամ հերոսուհին համարվում են մեռած, և նրանց վերակենդանացնելու համար հետևից պիտի գնան ամուսինը կամ կինը՝ ընկնելով բազում փորձությունների հորձանուտը: Նրանք ստիպված են անցնել և հաղթահարել դժվարանցանելի արգելքներ, որից հետո միայն կախարդանքը կվերանա, և հերոսները կրկին կփոխակերպվեն մարդու: Մի խումբ հեքիաթների դիպաշարերում հերոսները՝ անձեր, առարկաներ, վերածվում են գառան (ՀԺՀ 1959, 260), ոսկե ձկան (ՀԺՀ 1973, 91, ՀԺՀ, 1959, 23, 39), օձի (Բյուրակն 1899, 44), գորտի (Հայկունի 1901, 201): Կերպարանափոխությունը, որ ընդգծված դրսևորում ունի հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում, մեկնաբանման և դասակարգման լայն հնարավորություններ է ընձեռում (Հայ ժողովրդական հեքիաթներում այս փուլային դիտարկումը դեռ ամբողջական չէ. կերպարանափոխության տարատեսակներին ու դրանց խորքային մեկնաբանություններին կանդրադառնանք հետագա ուսումնասիրություններում):

Կերպափոխման առասպելական պատկերացումները արտացոլվել են ոչ միայն տարբեր գիտակարգերում, բանավոր ավանդության, գեղարվեստական գրականության մեջ, այլև ժամանակակից մշակույթի տարաբնույթ դրսևորումներում՝ կինոարտադրության, մուլտֆիլմերի, ինչպես նաև համակարգչային և բջջային խաղերի (Idle Transformation) ձևով: Ֆիլմերում հանդիպում են մարդ-սարդ (Человек-паук 2002), գայլ-մարդ (Гарри Поттер и узник Азкабана), արքայազն-գորտ (Принцесса и лягушка), արջ-մարդ (Храбрая сердцем), մրջյուն-մարդ (Человек-муравей и оса), հովազ-մարդ (Черная пантера), մարդ-ագռավ (Малефисента 2014) և այլ փոփոխակներ, որոնք կերպափոխման ճանապարհն անցնում են տարբեր նպատակների իրագործման համար՝ արդարության վերականգնում, չարի վերացում, բարու հաստատում: Հերոսները, հաղթահարելով բազմաթիվ փորձություններ, ի վերջո վերադառնում են իրենց նախնական էությանը: Կերպափոխությունն այստեղ էլ հաճախ իրականանում է հատուկ ատրիբուտների միջոցով՝ կոստյում, գավազան, կեռիկ, կերակուր, ականջող, շապիկ, մատանի, անգին քար, վզնոց, մազակալ, ակնոց, թևնոց, ինչպես նաև՝ համբույրի, անեծքի, նզովքի կամ բանաձևային խոսքի ուժով (վերջիններիս կանդրադառնանք առանձին ուսումնասիրությամբ):

Եզրակացություններ

Այսպիսով՝ կերպարանափոխությունը մարդու մտքի և մշակույթի հնագույն ու բազմաշերտ երևույթներից է, որը տարբեր ժամանակաշրջաններում և մշակույթներում ստացել է իր հատուկ իմաստներն ու գործառույթները: Այն արտացոլում է մարդու ներքին, հաճախ թաքնված ցանկությունը՝ սահմանները հատելու, փոխվելու և վերափոխվելու, ինչպես նաև բնության, հոգու և սոցիալական կարգերի միջև փոխհարաբերությունները բացահայտելու անհրաժեշտությունը: Այս թեման դրսևորվում է տարբեր գիտական, մշակութային ու կրոնական դաշտերում՝ լինելով հոգեբանական, կենսաբանական, էթնոգրաֆիական և դիցաբանական գործընթացների արտացոլում: Հայկական ավանդական բանավոր ժառանգության մեջ կերպարանափոխությունը սերտորեն կապված է դիցաբանական, առասպելական, սոցիալական և կրոնական արժեհամակարգերի հետ՝ ընդգծելով այն փոխակերպումների կարևորությունը, որոնցով անցնում են անհատն ու հասարակությունը՝ ի նպաստ ինքնաճանաչման, բարոյականացման և վերափոխման: *Կերպարանափոխություն* երևույթը հանդես է գալիս որպես բազմաչափ, համընդգրկուն մշակութաբանական, հոգեբանական, կենսաբանական և գեղարվեստական կատեգորիա, որն արտահայտում է մարդկային փորձառության հիմնական կետերը՝ անցումը, վերափոխումը, սահմանների հաղթահարումը և ինքնության վերաիմաստավորումը: Այն ձևավորում է խորհրդանշական համակարգ, որով ժողովուրդները մեկնաբանում են իրականության ու գերբնականի սահմանագծերը, մարդու և աշխարհի փոխհարաբերությունները: Հայկական բանավոր ավանդության համատեքստում կերպարանափոխությունն ընդգրկում է բազում գործառութային շերտեր: Այն միաժամանակ ծառայում է որպես բարոյախրատական, ծիսական, դիցաբանական և նարատիվ, կառուցման մեխանիզմ՝ արտահայտելով հասարակական նորմերի խախտման և վերականգնման, ինչպես նաև հոգևոր վերափոխման գաղափարներ:

Կերպարանափոխությունը հայ բանահյուսական ու դիցաբանական համակարգերում հանդես է գալիս որպես մշակութային հիշողության, հավատալիքների և ինքնության վերաիմաստավորման հիմնարար տարր: Այն ոչ միայն արտացոլում է հին աշխարհի մարդու տոտեմական մտածողությունը, այլև շարունակում է կենսական ազդեցություն ունենալ ժամանակակից ընկալումների, մշակութային ժառանգության և գեղարվեստական ինքնարտահայտման վրա:

Ի վերջո, կերպարանափոխություն երևույթը կարելի է դիտարկել բավական լայն ու համակողմանի մոտեցմամբ՝ ընդգծելով դրա կիրառումը ինչպես հնագույն առասպելներում, այնպես էլ ժամանակակից գիտության, տեխնոլոգիաների և հասարակական զարգացման համատեքստում: Այդպիսով կերպարանափոխությունը դառնում է ոչ միայն մշակութային երևույթ, այլև գիտական, տեխնոլոգիական և սոցիալական առաջընթացի բաղադրիչ-խորհրդանիշ:

Շնորհակալական

Այս հոդվածը գրելու ընթացքում տրամադրած գիտական տեղեկությունների ու խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում մեր ատենախոսության գիտական ղեկավար, բ.գ.դ. Թամար Հայրապետյանին և բ.գ.թ. Հասմիկ Գալստյանին:

Շնորհակալություն ենք հայտնում նաև «Լրաբեր հասարակական գիտությունների» խմբագրական կազմին՝ համագործակցության համար:

Գրականություն/References/Литература

1. Առաքելյան Բ. 1949, Հայկական պատկերաքանդակները IV–VII դարերում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
2. Arakelyan B. 1949, Armenian Relief Sculptures in the 4th–7th Centuries, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
3. Բյուրակն 1899, ԺԷ տարի, N 3, Կ. Պոլիս:
   Byurakn 1899, Year 18, N 3, Constantinople (in Armenian).
4. Էմինեան ազգագրական ժողովածու 1901, Ժողովրդական վէպ եւ հեքէաթ, հ. II, Մոսկուա-Վաղարշապատ, «Էջմիածին» հրատ. (հաւաքեց Ս. Հայկունի):
   Eminyan Ethnographic Collection 1901, Folk Epics and Fairy Tales, vol. II, Moscow–Vagharshapat, Ejmiatsin Press (Compiled by S. Haykuni) (in Armenian).
5. Համաստեղ 1989, Հայաստանի լեռներու սրնգահարը, Երևան, «Խորհրդային գրող»:
   Hamastegh 1989, The Shepherd with a Flute of the Armenian Mountains, Yerevan, Soviet Writer Press (in Armenian).
6. Հայրապետյան Թ. 2016, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, «Գիտություն»:
   Hayrapetyan T. 2016, Combination of Archetypes in Armenian Tales of Magic and Epic Heritage, Yerevan, Gitutyun (in Armenian).
7. Հարությունյան Ս. 2017, Հայ առասպելաբանություն, Երևան, «Անտարես»:
   Harutyunyan S. 2017, Armenian Mythology, Yerevan, Antares (in Armenian).
8. ՀԺՀ 1959, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
   Armenian Folk Tales 1959, vol. 2, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
9. ՀԺՀ 1962, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
   Armenian Folk Tales 1962, vol. 3, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
10. ՀԺՀ 1977, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 8, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
    Armenian Folk Tales 1977, vol. 8, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
11. ՀԺՀ 1984, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 13, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
    Armenian Folk Tales 1984, vol. 13, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

12. Ղանալանյան Ա.1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Khanalanyan A. 1969, Folk Legends, Yerevan, Academy of Sciences Press (in Armenian).

13. Մաթևոսյան Կ. 2017, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, «Մուղնի»:
Matevosyan K. 2017, The Rock Inscriptions and Memorial Records of Noravank, Yerevan, Mughni (in Armenian).

14. Ջիվանյան Ա. 2008, Հրաշապատում հեքիաթի պոետիկան. Համեմատությունը հեքիաթի համատեքստում (հայկական հեքիաթի նյութի հիման վրա), Թեկնածուական ատենախոսություն, Երևան:
Jivanyan A. 2008, The Poetics of the Tale of Wonder, A Comparative Study in the Context of the Fairy Tale (Based on Armenian Fairy Tale Material), PhD dissertation, Yerevan (in Armenian).

15. Ջրբաշյան Է. 1980, Գրականության տեսություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
Jrbashyan E. 1980, Literary Theory, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).

16. Ջրբաշյան Է., Մախչանյան Հ. 1972, Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս»:
Jrbashyan E., Makhchanyan H. 1972, Dictionary of Literary Studies, Yerevan, Luys (in Armenian).

17. Սահակյան Լ. 2025, Կերպարանափոխությունն իբրև մոգական հմտություն, շնորհք և հնարիմացություն «Կախարդը և իր երեխաները» հեքիաթաշարում, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, N 1:
Sahakyan L. 2025, Metamorphosis as a Magical Skill, Gift, and Artistry in the Fairy Tale Collection "The Sorcerer and His Children", Shirak Center for Armenian Studies, N 1 (in Armenian).

18. Jung C.G. 1959, The Archetypes and the Collective Unconscious, vol. 9, part 1, New Jersey, Princeton University Press.

19. Eliade M. 1959, The Myth of the Eternal Return, Cosmos and History, New York, Princeton University Press.

20. Idle Transformation, https://play.google.com/store/apps/details?id=com.funcell.transformation&pli=1 (Accessed on: 14.09.2025).

21. Арутюнова Н. 1990, Метафора и дискурс, Москва, «Прогресс».
Arutyunova N. 1990, Metaphor and Discourse, Moscow, Progress (in Rassian).

22. Ван Геннеп А. 1999, Обряды перехода, Москва, «Восточная литертура».
Van Gennep A. 1999, Rites of Passage, Moscow, Russian Academy of Sciences Press, Oriental Literature (in Russian).

23. Гарри Поттер и узник Азкабана, Гарри Поттер и узник Азкабана, https://kinogo.inc/films/1146-garri-potter-i-uznik-azkabana-2024.html (дата обращения: 14.09.2025).
Harry Potter and the Prisoner of Azkaban, https://kinogo.inc/films/1146-garri-potter-i-uznik-azkabana-2024.html (Accessed on: 14.09.2025) (in Russian).

24. Малефисента 2014, https://kinogo.inc/films/1294-malefisenta-hd-disney-v33.html (дата обращения: 14.09.2025).
Maleficent 2014, https://kinogo.inc/films/1294-malefisenta-hd-disney-v33.html (Accessed on: 14.09.2025) (in Russian).

25. Мелетинский Е. 1995, Поэтика мифа, Москва, «Восточная литература».
Meletinsky E. 1995, Poetics of Myth, Moscow, Russian Academy of Sciences Press, Oriental Literature (in Russian).

26. Принцесса и лягушка 2009, https://kinogo.inc/cartoons/10123-princessa-i-lyagushka-hdj3.html (дата обращения: 14.09.2025).
The Princess and the Frog 2009, https://kinogo.inc/cartoons/10123-princessa-i-lyagushka-hdj3.html (Accessed on: 14.09.2025) (in Russian).

27. Розенталь Д. 2013, Справочник по стилистике русского языка, Москва, «Айрис-Пресс».
Rosenthal D. 2013, A Handbook on the Stylistics of the Russian Language, Moscow, Iris-Press (in Russian).

28. Храбрая сердцем 2012, https://kinogo.art/comedy/5395-hrabraya-serdcem.html (дата обращения: 14.09.2025).
Brave 2012, https://kinogo.art/comedy/5395-hrabraya-serdcem.html (Accessed on: 14.09.2025) (in Russian).

29. Человек-муравей и оса 2018, https://kinogo.inc/films/514-chelovek-muravey-i-osa-hdtv-v12.htm (дата обращения: 14.09.2025).
Ant-Man and the Wasp 2018, https://kinogo.inc/films/514-chelovek-muravey-i-osa-hdtv-v12.htm (Accessed on: 14.09.2025) (in Russian).

30. Человек-паук, https://films.bz/films/27222-sard-marde-hayeren.html (дата обращения: 14.09.2025).
Spider-Man, https://films.bz/films/27222-sard-marde-hayeren.html (Accessed on: 14.09.2025) (in Russian).

31. Черная пантера 2018, https://www.kinopoisk.ru/film/623250/?utm_referrer=www.google.com (дата обращения: 14.07.2025).
Black Panther 2018, https://www.kinopoisk.ru/film/623250/?utm_referrer=www.google.com (Accessed on: 14.07.2025) (in Russian).